Տեղեկատու թիվ 8 (օգոստոս 2021թ.)
Newsletter N8

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

Արցախի շահերի պաշտպանության օրակարգով գումարվել է ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների առցանց խորհրդակցություն

ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ օգոստոսի 7-ին գումարվել է ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների առցանց խորհրդակցություն: Խորհրդակցությանը մասնակցել են Հայ դատի Կենտրոնական խորհրդի անդամները, Հայ դատի տարածաշրջանային գրասենյակների, ավելի քան 30 երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերի պատասխանատուները և ՀՅԴ մարմինների ներկայացուցիչներ: Խորհրդակցական ժողովի հիմնական օրակարգը վերաբերել է Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների կողմից Արցախի շահերի պաշտպանությանը:

տես ավելին

ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ Հայ դատի համակարգում իր գործունեությունը կսկսի ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակը

Հաշվի առնելով 44-օրյա պատերազմից հետո Արցախում ստեղծված հումանիտար, անվտանգային և բարոյահոգեբանական մարտահրավերները՝ ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ Հայ դատի համաշխարհային ցանցի կազմում իր

գործունեությունն է սկսելու ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակը։
Արցախում ՀՅԴ Հայ դատի գրասենյակի հիմնադրումը հստակ քաղաքական ուղերձ է առ այն, որ Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը, պատերազմի հետևանքների վերացումն ու Արցախի վերականգնումը շարունակում են լինել ՀՅԴ Հայ դատի համաշխարհային ցանցի գործունեության առանցքային խնդիրներն ու քաղաքական առաջնահերթությունները։
տես ավելին

The Office of the Armenian National Committee will be established in Artsakh

The Office of the Armenian National Committee will be established in Artsakh by the decision of the ARF Bureau, taking into account the humanitarian, security and moral-psychological challenges caused by the recent war, the Central Office of the Armenian National Committee said in a statement.
The establishment of the ANC Office in Artsakh is a clear political message that the protection of rights of the people of Artsakh, the international recognition of the Republic of Artsakh, the elimination of the consequences of war and the recovery of Artsakh remain the key issues and political priorities of the activity of the ANC global network.
տես ավելին

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Twenty-Seven U.S. Representatives Demand Investigation into Turkish Drone Program

Twenty-five U.S. Representatives have joined Rep. David Cicilline (D-RI) and Rep. Gus Bilirakis (R-FL) in a bipartisan call upon the State Department to suspend export licenses for U.S. drone technology to Turkey, pending an official investigation into the destabilizing role of Turkey's drone programs in the Caucasus, South Asia, the Eastern Mediterranean, and around the globe, a move strongly supported by the Hellenic American Leadership Association (HALC), American Friends of Kurdistan, Hindu American Foundation, In Defense of Christians, Middle East Forum, and the Armenian National Committee of America (ANCA).
Text Link

ANCA Haroutioun & Elizabeth Kasparian Summer Academy Empowers Young Armenian Americans

A stellar group of fourteen Armenian American high school students and recent graduates came to Washington, DC to take their commitment to pro-Artsakh/Armenia activism to the next level during the inaugural session of the Armenian National Committee of

America (ANCA) Haroutioun & Elizabeth Kasparian Summer Academy.
“The Haroutioun & Elizabeth Kasparian Summer Academy participants brought boundless enthusiasm and dedication to the inaugural session of the ANCA’s high school program, learning Armenian American federal advocacy best-practices, exploring future career opportunities, and sharing insights and inspirations to take back to their schools and communities,” said ANCA Programs Director Alex Manoukian. “Encouraging pro-Armenian civic participation and community organizing at the high school level opens up exciting new academic and professional horizons for these students.”
Text Link

«Բայրաքթարների» հարցը մեծ խնդիր է դառնում Վաշինգտոնում. կոնգրեսականները հետաքննություն են պահանջում

Ամերիկացի մի խումբ կոնգրեսականներ և Վաշինգտոնում գործող մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ՝ ի դեմս հայկական, հունական, քրդական, հրեական, հնդկական համայնքների, «Ի պաշտպանություն քրիստոնյաների» և իրավապաշտպան այլ կազմակերպությունների, ԱՄՆ կառավարությունից պահանջում են դադարեցնել ամերիկյան այն տեխնոլոգիաների արտահանումը, որոնք օգտագործվում են թուրքական ԱԹՍ-ների (անօդաչու թռչող սարքերի) արտադրության մեջ, և առհասարակ հետաքննել Թուրքիայի անօդաչուների ծրագրի ապակայունացնող դերակատարումը տարածաշրջանում:
Հայ և հույն ակտիվիստների կարծիքով՝ մեծ է հավանականությունը, որ մահաբեր «Բայրաքթարների» արտադրության մեջ օգտագործվող ամերիկյան տեխնոլոգիաների մատակարարումը Թուրքիային ի վերջո կդադարեցվի:
տես ավելին

Հայ Դատի Արևմտյան Ամերիկայի հանձնախումբը ողջունում է Կալիֆորնիայի

Կալիֆորնիայի պետական աշխատողների կենսաթոշակային համակարգը

վեհաժողովի անդամ Քրիս Հոլդենի նախաձեռնությունը:
տես ավելին

սահմանափակում է իր ակտիվները Թուրքիայում
տես ավելին

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Կանադայում կայանալիք համապետական խորհրդարանական ընտրություններից առաջ Հայ դատի Կանադայի հանձնախումբը հրապարակել է իր քաղաքական առաջնահերթությունները

Հայ դատի Կանադայի հանձնախումբը (ANCC) օգոստոսի 27-ին՝ սույն թվականի սեպտեմբերի 20-ին նշանակված դաշնային ընտրություններին ընդառաջ, հրապարակել է իր քաղաքական առաջնահերթությունների տարեկան փաստաթուղթը: Այս առիթով Հայ դատի Կանադայի հանձնախմբի համանախագահ Հրագ Թարեքջյանը ընդգծել է. «Սա վճռորոշ ընտրություն է բոլոր կանադացիների համար, ներառյալ՝ կանադահայ համայնքի, որը վերջին երկու տարիների ընթացքում անցել է ծայրահեղ բուռն իրադարձությունների միջով, հետևաբար, մենք ցանկանում ենք ապահովել, որպեսզի մեր ձայնը լսելի լինի, և պատշաճ գործողություններ ձեռնարկվեն մեր համայնքին վերաբերող հարցերի շուրջ»:
Քաղաքական առաջնահերթությունների փաստաթուղթը ռազմավարական դիրքորոշում ունի՝ լուծել Արցախի Հանրապետությունում առկա խնդիրները՝ շեշտը հատուկ դնելով անցյալ տարվա ընթացքում ադրբեջանաթուրքական ագրեսիայի սարսափելի հետևանքների վերացման վրա:
տես ավելին

ANCC Releases Policy Priorities Document Ahead of Federal Election

The Armenian National Committee of Canada (ANCC) published its annual policy priorities document, ahead of the upcoming federal election scheduled on September 20, 2021.
“This is a crucial election for all Canadians, including the Armenian-Canadian community who went through extremely tumultuous times over the past two years and therefore, we want to ensure that our voices are heard and proper action is taken on issues concerning our community,” said Hrag Tarakdjian, Co-President of the ANCC.
This year’s policy document is strategically positioned to address matters in the Republic of Artsakh, with a specific focus on the dire consequences of last year’s Turkish-backed Azerbaijani aggression
A wide array of policy recommendations, ranging from the recognition of the Republic of Artsakh to establishing a Canadian embassy in Yerevan, advocating for the safe return of the Armenian Prisoners of War illegally held by Azerbaijan, and defending both Armenia’s and

Artsakh's security and territorial integrity are specifically outlined, amongst many other important issues.
Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Ավստրալիացի 16 հայտնի քաղաքական գործիչներ միացել են Արցախի ավստրալիացի բարեկամների խմբին. խմբի անդամների թիվն անցել է 70-ից

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբը հաղորդում է, որ Ֆեդերալ սենատորներ Էնդրյու Բրեգի և Ժանեթ Ռայսի առաջնորդությամբ Արցախի ավստրալիացի բարեկամների մշտապես աճող խմբին են միացել ևս 16 նշանավոր գործիչներ՝ սատարելու Արցախի հայկական հանրապետության ինքնորոշման իրավունքին։ Արցախի ավստրալիացի բարեկամների խումբը կազմավորվեց 2019 թ. օգոստոսին, երբ Ավստրալիայի Հայ Դատի հանձնախումբը և Ավստրալիայում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցիչը հյուրընկալեցին Արցախի Հանրապետության պատվիրակությանը՝ գլխավորությամբ այն ժամանակվա արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանի և Արցախի ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանի։ Ի պաշտպանություն Արցախի Հանրապետության բնիկ հայության ստեղծված խումբը ձևավորվելիս ուներ շուրջ 40 անդամ, ներկայումս այդ թիվը գերազանցում է 70-ը։
տես ավելին

---

16 Prominent Australians Join Friends of Artsakh to Take Network to Over 70 Members

Federal Senators Andrew Bragg and Janet Rice lead a group of 16 prominent additions to the ever-growing cohort of the Australian Friends of Artsakh, helping mark the two-year anniversary of the network established to support the right to self-determination of the Armenian Republic of Artsakh, reported the Armenian National Committee of Australia.
The Australian Friends of Artsakh was launched in August 2019, when the Armenian National Committee of Australia (ANC-AU) and Mr. Kaylar Michaelian – the Permanent Representative of the Republic of Artsakh in Australia – hosted a delegation from the Republic of Artsakh led by then-Foreign Minister, His Excellency Masis Mayilian and the Hon. Davit Ishkhanyan MP.
The network established under the #MOVINGMOUNTAINS catchphrase has grown from 40 inaugural signatories to now number over 70 prominent Australians who have all lended their names in support for the basic human rights and principles of self-determination of the indigenous Armenian population of the Republic of Artsakh, which is currently under
Text Link

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Դենդիասը օգոստոսի 3-ին արձագանքել է ՀՅԴ

Հայ դատի Հունաստանի հանձնախմբի բողոքին՝ կապված Հունաստանի դեսպանի՝ Շուշի այցելության հետ: Նախարար Դենդիասը ՀՅԴ Հայ դատի հանձնախմբին ուղղված նամակում նախ վերահաստատել է Հունաստանի և Հայաստանի միջև առկա գերազանց հարաբերությունները: Դեսպանի՝ Շուշի այցը նախարարը պարզաբանել է նրա պաշտոնական լիազորությունների կատարմամբ և դեսպանընկալ պետության զարգացումներին ծանոթանալու անհրաժեշտությամբ:

տես ավելին

Օգոստոս 25-ին ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը և ՀԴՅ Հայ դատի Հունաստանի հանձնախմբի նախագահ Հռիփսիմե Հարությունյանը հանդիպել են ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, մեր ժողովրդի մեծ բարեկամ Ռոբերտ Մենենդեսին: ՀՅԴ Հայ դատի ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել սենատորին հայ ժողովրդի իրավունքների խաշտպանության գործում ունեցած ներդրման համար: Հանդիպման ընթացքում ի թիվս այլնի քննարկվել են հունահայ գաղութին հուզող հարցեր:

տես ավելին

Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

ՀՅԴ Հայ դատի Կիպրոսի հանձնախումբը օգոստոսի 3-ին նամակով դիմել է Կիպրոսի արտաքին գործերի նախարար Նիկոս Քրիստոդուլիդեսին՝ հորդորելով դատապարտել Հայաստանի հյուսիսարևելյան սահմանին Ադրբեջանի ռազմական ագրեսիան՝ նկատելով, որ ադրբեջանաթուրքական տանդեմի նպատակը Հայաստանն ու հայերին քարտեզի վրայից վերացնելն է, ինչը չպետք է որևէ կերպ հանդուրժվի:

Հայկական իրավական կենտրոն (ALC)

Հայկական իրավական կենտրոնն Ադրբեջանի կողմից սպանված հայ ռազմագերիների գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում սկսել է իրավական գործընաց

ARMENIAN LEGAL CENTER
FOR JUSTICE AND HUMAN RIGHTS

Վաշինգտոնում գրանցված Արդարության և մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնը (ALC), համագործակցաբար ՀՀ-ում գրանցված Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի հետ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում նոր գործեր է ներկայացրել, որոնցով Ադրբեջանը մեղադրվում է հայ ռազմագերիների և պատանդառության մեջ գտնվող անձանց մահվան համար: ՄԻԵԴ ներկայացված փաթեթում նշվում է՝ թվով 19 անձինք, ինչպես իրենց հայրենի բնակավայրերում մնացած քաղաքացիական մարդիկ, այնպես էլ զինվորականներ, միմյանցից տարբեր 10 միջադեպերի արդյունքում սպանվել են, երբ գերության մեջ են գտնվել ադրբեջանական ուժերի կողմից կամ եղել են ձերբակալված: Դիմումները ներկայացվել են ականատեսների ցուցմունքների, համացանցում տարածված տեսաձայնագրությունների, դատաբժշկական փորձաքննությունների անհերքելի ապացույցներով և փորձագիտական եզրակացություններով:
Երկու իրավապաշտպան կազմակերպությունները հավաքված նյութերով փորձում են պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին՝ ինչպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, այնպես էլ միջազգային հումանիտար իրավունքի համաձայն՝ գերության մեջ գտնվող անձանց կյանքը չպաշտպանելու համար:
տես ավելին

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info